

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ Հ. 5/3

08.04.2011թ.

Ժամը 11.40

Նիստը վարում է Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը:

Հերթագրվել է ավագանու ութ անդամ:

Կարեն Կարապետյան - Հարցի համար ձայնը տրվում է Ռուսլան Բաղդասարյանին:

Ռուսլան Բաղդասարյան - Հարցը վերաբերում է Դավթաշենի կամրջի կապիտալ վերանորոգմանը:

Այս տարվա բյուջեով նախատեսված է, որպեսզի կապիտալ վերանորոգվի, և կուզեի իմանալ, թե հիմա ի՞նչ փուլում է այդ գործընթացը: Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Կամո Արեյանը:

Կամո Արեյան - Հարցարժան ավագանի, պատասխանեմ Ձեր հարցին.

Երևանի համայնքային բյուջեի շրջանակներում Դավթաշենի կամրջի վերականգնման և ամրացման ծախսային ծրագրով նախատեսված է 585 մլն դրամ, նախագծանախահաշվային փաստաթղթերը պատրաստ են, հայտարարված է մրցույթ: Ապրիլի վերջին մրցույթը կկայանա, և շինարարական ընտրված կազմակերպությունը կսկսի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքները: Նախկինում նախագծանախահաշվային փաստաթղթերով հաշվի են առնվել կամրջի հետ կապված բոլոր թերությունները, և մենք վստահ ենք, որ շինարարական աշխատանքների ավարտից հետո կունենանք լիարժեք շահագործվող կամուրջ:

Կարեն Կարապետյան - Բավարարվա՞ծ եք:

Ռուսլան Բաղդասարյան - Այո, շնորհակալություն:

Կարեն Կարապետյան - Հաջորդ հարցը. պարոն Ջիվան Պողոսյան, խնդրե՛մ:

Ջիվան Պողոսյան - Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, հարցս ուղղում եմ գլխավոր ճարտարապետին՝ պարոն Հասրաթյանին: Հարցը նախկինում հնչեցրել եմ.

1991-1997թթ. խորհրդային կարգերի փլուզումից հետո հողային ռեֆորմի շնորհիվ կատարվել է հողաբաժանում, սեփականության պետական իրավունքի ակտեր են տրվել Հաղթանակ թաղամասի նախկին Հաղթանակ գյուղի բնակիչներին: Հիմա ողջունում եմ այն փաստը, որ սեփականության ակտով տնամերձ հողատարածքների վերաբերյալ ստեղծվել է հանձնաժողով և կատարվում է իրավունքի վերականգնում՝ հիմքերի վերականգնում, սակայն շուրջ 140 հա գյուղնշանակության սեփականության ակտով հողեր կան տրված բնակիչներին, որոնք ենթակա են օրենքի ուժով պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով, սակայն բնակիչները ստանում են պատասխաններ, որ գյուղնշանակության հողատարածքները գտնվում են նախագծային կառուցապատման տակ և չեն գրանցվում, պետական գրանցում չեն ստանում, քանզի շուրջ 15-17 տարի մշակում են այդ հողատարածքները, օգտագործվում են գյուղատնտեսական նպատակով և հողային հարկեր են վճարում:

Կուզենայի իմանալ, քանի որ ստեղծվել է տնամերձ հողատարածքների վերաբերյալ այդ հանձնաժողովը, ինչու՞ վերականգնում չի կատարվում բնակիչների սեփական ակտով ստացած հողերի նկատմամբ:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետ Անդրանիկ Քասարյանը:

Անդրանիկ Քասարյան - Հարգելի՛ ավագանի, ինչպես Դուք նշեցիք, ստեղծվել է հանձնաժողով, հանձնաժողովում քննարկվում են տնամերձերի հարցերը: Տնամերձերն ընդգրկված չեն այդ քաղաքաշինական ծրագրի մեջ, որի մասին Դուք նշեցիք: Այն հողերը, որոնք գյուղնշանակության հողեր են եղել, ընդգրկված են քաղաքաշինական ծրագրի մեջ, որի կառուցապատման նախագիծը կա և գտնվում է քննարկման փուլում: Մենք այդ հողերի քննարկումը տեղափոխել ենք երկրորդ էտապ, հասկանալով նաև Ձեր անհանգստությունը, դա նաև մեր անհանգստությունն է, թե ինչպե՞ս պետք է փոխհատուցենք բնակիչներին կամ ընդգրկենք այդ ծրագրի մեջ, այսինքն դա գտնվում է քննարկման փուլում:

Զիվան Պողոսյան - Շնորհակալություն:

Ես հուսով եմ, որ կկատարվի իրավունքի վերականգնում, քանի որ 15 տարուց ավելի է, որ մարդիկ այդ հողատարածքները մշակում են, բայց իրենց իրավունքը չի վերականգնվում և պետական գրանցում չի կատարվում, բնակիչները զրկված են, օրինակ, ստանալ գյուղատնտեսական վարկեր կամ ասենք՝ առք ու վաճառք կատարեն, և այդ կառուցապատումը, ըստ երևոյթին, կարող է 30 տարի տևել: Այսինքն, նշանակում է՝ մենք ոտնահարում ենք այդ բնակիչների իրավունքները, որ նա ի վիճակի է, ենթադրենք, ուզում է, ցանկություն ունի այդ գյուղնշանակության հողը վաճառքի հանել կամ նվիրատվություն անել, բայց փաստորեն զրկված է դրանից: Ես ուղղակի կուզեի, որ միաժամանակ այդ աշխատանքային խումբը, որ հաշվառում է կատարում, գրանցում է և գեոդեզիա է անում, միաժամանակ աներ այդ քանի որ պետական ակտով կան, որ տնամերձ հողատարածքները /նույն ակտի մեջ գրված է/ ստացել են և գյուղնշանակության հողատարածք և տնամերձ հողատարածք: Այդ իսկ պատճառով, իմ կարծիքով, պետք է զուգահեռ այդ գործընթացը գնար, և հետո պետական գրանցում ունենալուց հետո քաղաքացուն կասեն՝ հարգելի՛ս, այդտեղ կառուցապատում է լինելու, օրինակի համար լինելու է Հարավային թաղամաս, ճանաչում ենք գերակա շահ, և հետո խոսքը կգնա հատուցման մասին, բնակիչներից կվերցնեն այդ հողատարածքները, և քանի որ հողատարածքները գյուղատնտեսական նշանակության նպատակով են և, հասկանալի է, բնակիչներն օգտագործում են հենց այդ նպատակով, կառուցապատում այդ հողերի վրա չի կատարվում:

Կարեն Կարապետյան - Հասկանալի է: Պարո՛ն Քասարյան, ե՞րբ եք պատասխանում, ե՞րբ եք որոշում:

Անդրանիկ Քասարյան - Պարոն քաղաքապետ, մենք պետք է ավարտենք տնամերձերի խնդիրը, տնամերձերի խնդիրն ավարտելուց հետո անցնելու ենք գյուղատնտեսական նշանակության հողերին, սակայն մի բան պետք է ասեմ, որ Երևանի քաղաքի հաստատված գլխավոր հատակագծով Երևանում գյուղնշանակության հողեր չկան, և գյուղատնտեսական նպատակով այդ հողերը չեն շահագործվել, այսինքն՝ վարկեր վերցնել, գյուղմթերքներ մշակել, դա արդեն բացառվում է: Փոխհատուցման խնդիրը կնայենք:

Կարեն Կարապետյան - Շնորհակալություն:

Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է տիկին Աստղիկ Գևորգյանին, խնդրե՛մ:

Աստղիկ Գևորգյան - Շնորհակալություն, հարգարժան պարոն քաղաքապետ, իմ հարցը վերաբերում է Երևանի արտաքին ձևավորմանը, գովազդային քաղաքականությանը և ցուցափեղկերին: Ակնհայտ է, որ մեծ աշխատանք է տարվում Երևանն ավելի գեղեցիկ դարձնելու համար, և հենց այդ տրամաբանությամբ չեմ կարող չնշել իմ մտահոգությունը:

Մտածանադրությամբ Հայաստանում պետական լեզուն հայերենն է, սակայն գովազդային վահանակների, խանութների, ռեստորանների, սրճարանների ցուցափեղկերի պարագայում խախտվում է օրենքը և զրկվում է անգլերեն: Եվ ոչ միայն անգլատառ, այլև օտարաբովանդակային ցուցափեղկեր: Ես չգիտեմ՝ ո՞ր աստիճանում, ո՞ր մակարդակում է որոշվում, որ այդ բովանդակությամբ թույլտվություն են տալիս, բայց կարծում եմ, որ մենք ունենք մեր պատմության զինանոցում բավականաչափ հարուստ զինանոց մայրենի լեզվի և հայերենի, որպեսզի տանք հայերեն անվանումներ: Մեր քաղաքի գովազդը ողողված է

իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներով: Վերջին շրջանում, հատկապես Բաղրամյան պողոտայում, որտեղ ես ապրում եմ, ամեն օր անընդհատ ավելանում են անգլատառ ցուցանակները, վահանակները, սա՝ լեզվի և բովանդակության մասին:

Մեկ օրինակ բերեմ.

Մաշտոցի պողոտայի և Ամիրյան փողոցի աջ հատվածում, խանութի վրա դեղին ֆոնին սև տառերով գրված է «Սուպեր խորոված». ոչ մի քաղաքակիրթ մայրաքաղաքի հարիր չէ նման ցուցանակ պահելը: Մինչ այդ գրված էր «Սուլթան խորոված», մամուլի ահազանգի հիման վրա «սուլթան»-ը հանվեց փոխարինվեց «սուպեր»-ով, մեկնաբանությունները, կարծում եմ, ավելորդ են:

Մյուս հարցը վերաբերում է գովազդի վահանակների չափերին.

Այդ մեծ չափեր ունեցող գովազդները չեմ կարծում, որ գեղեցկացնում են քաղաքը, գուցե դա դիտվում է մեծ քաղաքների խճուղիների վրա, բայց Երևանում դրանք չեն դիտվում: Ես շատ կուզենայի հասկանալ տրամաբանությունը, և արդյոք մենք ի գործ ու ենք ճիշտ քաղաքականություն վարելու, որպեսզի այն քաղաքականությունը, որը տանում է քաղաքապետարանը, էլ ավելի գեղեցկացնի, շենացնի, ավելի գեղեցիկ դարձնի մեր քաղաքը:

Ես ներողություն եմ խնդրում, ես պետք է Ձեզ փոխանցեմ այս գովազդը՝ Կոմիտասի 140-ամյակին նվիրված. սա Կոմիտասի ծաղրանկարն է, ոչ թե Սուրբ Կոմիտասի գովազդը՝ 140-ամյակին նվիրված:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի արտաքին ձևավորման և գովազդի վարչության պետ Ա. Հարությունյանը:

Արմեն Հարությունյան - Ինչ վերաբերում է օտարահունչ լեզուներով տեղադրված գովազդներին, եթե միայն անգլերեն կամ իտալերեն է տեղադրված, ինչպես նշեցիք, դրանք ապրանքանիշներն են, որոնք գրանցված ապրանքանիշներ են և որոնք թարգմանության ենթակա չեն: Ինչ վերաբերում է այդ մեկ, երկու դեպքերին՝ «Սուպեր խորոված» կամ «Սուլթան խորոված», ամեն օր դրանք հսկողության տակ են, և որոնք չեն համապատասխանում լեզվի մասին օրենքին, ապամոնտաժվում են կամ փոխարինվում են հայերեն գրվածքով: Մասսայական, նմանատիպ, որ բոլորը անգլերեն լինեն, չկան: Էլի եմ կրկնում, որոնք ապրանքանիշներ են, օրինակ՝ «Samsung», վերցնել և թարգմանել հայերեն (թեկուզ մենք փորձեցինք դա թարգմանել. եթե նկատել եք, Ամիրյան փողոցի վրա արդեն հայերենը տեղադրված է), բայց առաջացավ խնդիր նաև նույն կազմակերպության ներկայացուցչի հետ, իրենց արտասահմանյան դիտորդի հետ, որ չեն թույլատրում նմանատիպ անվանումները թարգմանել: Ինչ վերաբերում է Ձեր նշած գովազդներին, դրանք օրական փոփոխվում են, եթե Դուք նկատել եք, դրանք արդեն քչացել են, բացառություններ կան, որոնք ընթացքում անպայման կշտկենք:

Ինչ վերաբերում է Ձեր երկրորդ հարցին, չափերի հետ կապված, եթե նկատել եք, գովազդների վահանակներ վերջին մի քանի տարիներին չեն ավելացել: Ինչը մենք ունենք, դրանք ժառանգություն ստացած վահանակներն են, որոնք ժամանակի ընթացքում համապատասխանել են ընդունված ստանդարտներին, և զուգահեռաբար մեր կողմից նոր չափորոշիչներ են հաստատվելու ու սահմանելու են փողոցներում տեղադրվող գովազդային վահանակների թե՛ չափերը, թե՛ ձևերը: Այդ ընթացքում, թե որոնք կապամոնտաժվեն, որոնց տեղերում կհայտնվեն նոր վահանակներ՝ ավելի կոնկրետ չափերի, այսօր երևի չեմ կարող ասել՝ մինչ չափորոշիչների հաստատումը:

Պարոն քաղաքապետ, իսկ Կոմիտասի 140-ամյակին նվիրված գովազդը Մշակույթի նախարարության կողմից տեղադրված պաստառ է:

Պարոն քաղաքապետ, մենք օրենսդրական փոփոխության արդյունքում հնարավորություն ունենք տույժի ենթարկելու չհամապատասխանող չափորոշիչներին, գովազդի մասին նախագիծը քննարկման փուլում է, լինելուց հետո մենք կարող ենք այդ հարցին ավելի հստակ լուծում տալ:

Լևոն Իգիթյան - Պարոն քաղաքապետ, քանի որ թեման բացվել է, նշանակություն չունի Մշակույթի նախարարությունն է հեղինակը, թե ուրիշները, քաղաքի տերը

քաղաքապետարանն է, քաղաքականությունը այստեղից է գալիս, երկրորդը՝ ես առաջարկում եմ քաղաքապետարանում մի հաստիք լինի՝ խմբագիր, Երևանում ինչ գրություն արվում է մեծ տառերով, այդ խմբագրի ստորագրությունը մինչև չլինի, այդ գովազդը ոչ մի տեղ չտեղադրվի: Վերջին հաշվով, մեր հին սերնդի ճարտարապետները մեծ կոթողներ են ստեղծել՝ Երևանյան շենքերի տեսակ, այդ շենքերը բոլորը ծածկված են 5 մետրանոց պաստառներով, այդ ճարտարապետը մտածել է, չէ՞, դա հորինվածք է, դա ստեղծագործություն է, չէ՞: Վերջերս Բաղրամյան փողոցում մի մեծ շենքի վրա, չես հասկանում ո՞վ է այդ մարդը, բոլորին ամեն ինչ կարելի՞ է, սա քաղաք է, սա մայրաքաղաք է և վերջինը՝ այդ ճանապարհներին, որ գրված է «Ես քեզ սիրում եմ» կամ «Ես Ձեզ սիրում եմ» այդ ի՞նչ է, մեկ-մեկ այդտեղ պատահական մարդկանց սեր է լինում:

Կարեն Կարապետյան - Պարոն Հարությունյանն ասաց հետևյալը, որ ինչպես կամայական գործի մեջ, այնպես էլ գովազդի մեջ պետք է լինեն չափորոշիչներ և խաղի կանոններ: Ինչ վերաբերում է բրենդներին, ակնհայտ է, որ այնտեղ մենք կիրառելու ենք այդ օրենքը, օրենքն ընդունելուց հետո տույժ ու տուգանքը կխստացնենք: Ինչ վերաբերում է դուր գալ կամ դուր չգալուն, ճիշտ էք ասում՝ վերջին ֆիլտրը կատարում է Երևանի քաղաքապետարանը, բայց ես, օրինակի համար եմ ասում, երկու ստեղծագործ մարդ ասում են դուր չի գալիս, չորսը՝ ասում են, որ դուրը գալիս է, մոտեցումը բավականին սուբյեկտիվ է, որոշել չափորոշիչները բավականին դժվար է, չափերի և գովազդի վերաբերյալ այստեղ մենք պետք է գտնենք կետը, գովազդը քաղաքի համար լավ է բյուջեի առումով, երբ որ ինքը քաղաքի արտաքինը խախտում է և դրանից ավելի շատ վնաս է, ուրեմն դեմը պետք է առնենք, ինչքան ես գիտեմ, պարոն Հարությունյանը կհաստատի, հենց այդ խաղի կանոններն են ձևակերպվում, համապատասխան նորմատիվ դաշտն ենք կանոնակարգում, որպեսզի այդ ամենը չլինի:

Խմբագրի վերաբերյալ. գովազդի քաղաքականությունն վարող վարչությունն իր կազմում ներառում է այդ բոլոր գործառույթները:

Հարցի համար ձայնը տրվում է պարոն Փլավյանին:

Պողոս Փլավյան - Շնորհակալություն, հարցն ուզում եմ ուղղել գլխավոր ճարտարապետին: Կոնկրետ Արաբկիր վարչական շրջանում բյուջեով 2011 թվականի համար նախատեսել ենք կառուցել երկու անցումներ, որոնց համար առկա են նաև նախագծերը, կոնկրետ Բաղրամյան - Օրբելի ստորգետնյա անցումի մասին է խոսքը և հ.128 Տոլստոյի դպրոցի հարևանությամբ վերգետնյա անցումի:

Ուզում էի իմանալ՝ ի՞նչ վիճակում է, և ե՞րբ են սկսելու աշխատանքները:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Միքայել Հասրաթյանը:

Միքայել Հասրաթյան - Հարգելի՛ ավագանիներ, ինչ վերաբերում է Օրբելի - Բաղրամյան խաչմերուկի գետնանցումին, այդ տարբերակը հանված է 2011 թվականի ծրագրից, որովհետև վերգետնյա լուծումն ավելի նպատակահարմար ենք գտնում, և այժմ դրա էսքիզային տարբերակն է քննարկվում, երկրորդը՝ վերգետնյա կամուրջը ծրագրի մեջ ընդգրկված է:

Պողոս Փլավյան - Այսինքն, հանված է, թե՞ փոխարինում ենք վերգետնյայով, այնտեղ վերգետնյայի դեպքում մենք ունենք խնդիր՝ մտնում ենք երկու սեփական հողերի մեջ, եռակողմ էր Օրբելու մասում ստացվում, ընկնում էինք շենքի տարածքի մեջ, մյուսը՝ այնտեղ սեփական հող էր, այդ հարցը լուծված է, թե՞ լուծված չէ:

Միքայել Հասրաթյան - Հարցը քննարկման փուլում է, բայց այդ լուծումը քաղաքի համար ավելի նպաստավոր է և ավելի ճիշտ, գրագետ լուծում է: Ստորգետնյա այդ անցումը նորմալ չի արդարացնելու իրեն:

Պողոս Փլավյան - Խնդիր չկա, իսկ այս տարվա մեջ մենք կհասցնենք այդ ամենը կարգավորել, որովհետև այնտեղ երկու հատ դպրոց կա իրար մոտ՝ 2000 աշակերտով:

Միքայել Հասարթյան - Այդ խնդիրը բոլորիս մտահոգում է, հենց այդ պատճառով այդ լուծումը՝ վերգետնյա կամուրջի, գտնում ենք ավելի նպատակահարմար, որովհետև հատվածը, որը կհսում է Օրբելու փողոցը, վերևի հատվածին էլ է սպասարկելու:

Պողոս Փլավյան - Ընդունեցինք, ժամկետի հետ է կապված հարցը:

Միքայել Հասարթյան - Փորձենք տեղավորվել:

Պողոս Փլավյան - Եթե կարելի է, երկրորդ հարցը.

Հարցն ըստ էության երևի ուղղեմ Ձեզ.

Քաղաքային վերջին ժամանակների փոփոխությունների հետ, մասնավորապես՝ կապված կրպակների հետ, կուզենայի, որպեսզի տեղեկացնեիք՝ ի՞նչ վիճակում է գործառույթը, գործընթացն ինչպիսի իրավիճակում է, և ի՞նչ ենք ակնկալելու:

Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան - Մենք նախատեսել էինք ապամոնտաժել մոտ 800 կրպակ, եղավ նա, որ մենք որոշեցինք ապամոնտաժել 573 կրպակ, ինչի՞ է տարբերություն տալիս, տարբերությունն այն կրպակներն են, որոնք աշխատում են: Այս պահին 573 կրպակից ևս որոշակի քանակի կրպակներ բացօթյա առևտրի բացակայության պատճառով աշխուժացել են, նրանց նկատմամբ նույնպես ավելի լիբերալ մոտեցում ունենք՝ հանվում են, ապամոնտաժվում են այն կրպակները, որոնք անօրինական են և չեն աշխատում: Կրպակներ կան, որոնք անօրինական են, բայց աշխատում են, հետո այդ կրպակներն էլ են հանվելու, որպեսզի սոցիալական լարվածությունը թուլանա և հերթական այս խոսակցությունները չլինեն, այստեղ մի քիչ մեղմ մոտեցում է ցուցաբերվել, բայց վերջիվերջո այդ կրպակները հանվելու են:

Շնորհակալություն:

Կարեն Կարապետյան - Հարցի համար ձայնը տրվում է Հրաչ Պողոսյանին:

Հրաչ Պողոսյան - Շնորհակալություն, պարոն քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, ես երեք հարց ունեմ.

Անցյալ տարի՝ 2010 թվականին լրացավ երգիչ Պավել Լիսիցյանի հոբելյանը, որը տոնեցին նաև Մոսկվայում: Այդ կապակցությամբ մեր Կառավարությունը 2010 թվականի նոյեմբեր ամսին որոշում ընդունեց գումար հատկացնել ընտանիքին՝ մեմորիալ հուշատախտակ կառուցելու համար: Դեկտեմբեր ամսին մշակույթի նախարարությունը այդ գումարն իր հրամանով տվեց ընտանիքին, և դրանից հետո նրանք չեն կարողանում այդ գործն առաջ տանել, որովհետև մինչև օրս ավագանին չի լուծել այդ խնդիրը: Եթե մենք մյուս ավագանու նիստին՝ մայիսի 6-ին, ինչպես Դուք ասացիք, այդ հարցը մտցնենք ավագանու նիստ և անցնի և որոշում ընդունվի, ապա դա կդառնա կես տարի՝ կառավարության որոշումից հետո: Ես կարծում եմ, որ նման գործընթացը չափազանց դանդաղ է և անարդյունավետ, մանավանդ երբ կա կառավարության որոշում, և մարդու հոբելյանը վաղուց անցել է:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի Երևանի ավագանու գործունեությունն ապահովող աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Գագիկ Բաղդասարյանը:

Գագիկ Բաղդասարյան - Քաղաքապետարանում այս պահին կա մոտ 200 հուշատախտակների տեղադրման առաջարկ, այդ թվում՝ Պավել Լիսիցյանի հուշատախտակի տեղադրման առաջարկը: Այդ առաջարկները տրամադրվել են հանձնաժողովին՝ քննարկելու և իր կարծիքը ներկայացնելու համար: Միևնույն ժամանակ, հանձնաժողովին է տրամադրվել նաև մեր կողմից առաջարկություն՝ հուշատախտակների չափորոշիչների վերաբերյալ, կլինեն չափորոշիչները, և դրա հիման վրա ավագանու կողմից կընդունվեն որոշումներ: Մեր առաջարկությունը կա, կա նաև հանձնաժողովի առաջարկությունը, երկուսն էլ պետք է քննարկվեն, և վերջնական տարբերակը կներկայացվի ավագանու հաստատմանը, դրանից հետո կսկսի գործառույթը, կանդրադառնանք: Այսինքն՝ ավագանու քննարկմանը կներկայացվեն այն բոլոր առաջարկությունները, որոնք այսօր կան:

Կարեն Կարապետյան - Շատ լավ, պարոն Բաղդասարյան, մի բան հասկանանք: Անկեղծ ասեմ, ես չեմ հասկանում, որ կառավարիչների թիմը իր վրա կվերցնի պատասխանատվությունը, որ որոշեն՝ ու՞մ տրամադրեն, ու՞մ չէ: Դրա համար իրոք պետք է լինեն չափորոշիչներ, և ունենանք այն աստիճանը, որը կոմպենստենտ է: Դա ճշմարտություն է, բայց կառավարությունը ի՞նչ որոշում է կայացրել Պավել Լիսիցյանի հուշատախտակի համար, փո՞ղ հատկացնել, թե՞ նաև տեղադրել: Մեզ համար դա չափորոշիչների մեջ մտնո՞ւմ է, թե՞ ոչ:

Գագիկ Բաղդասարյան - Կառավարությունը միայն գումարն է հատկացնում:

Կարեն Կարապետյան - Բայց մենք որոշում չունենք, փողը ինչպե՞ս է հատկացրել:

Գագիկ Բաղդասարյան - Հարազատներն են դիմել կառավարությանը:

Զավեն Առաքելյան - Գործող կարգը, որ կա, ավագանին պետք է համապատասխան որոշում կայացնի, բայց այդ խնդրին կոնկրետ տեղյակ չեմ, կնայեմ, լրացուցիչ կասեմ:

Կարեն Կարապետյան - Շատ լավ, իսկ որ ասում եք, մենք առաջարկել ենք չափորոշիչներ, ո՞վ է այդ աստիճանը, ո՞վ է այդ չափորոշիչները ամփոփում, ե՞րբ է դա լինելու, ու՞մ եք դիմել, որ ասեն այս մարդուն՝ այո, այս մյուսին՝ ոչ:

Գագիկ Բաղդասարյան - Ուրեմն, ոչ միայն առաջարկվեց հանձնաժողովին ներկայացված չափորոշիչները քննարկել, նաև առաջարկվեց ունենալ մասնագիտական հանձնաժողով, որը նախկինում եղել է քաղաքապետարանում, որում ընդգրկված կլինեն բոլոր ստեղծագործական միությունների ներկայացուցիչները՝ ի դեմս ղեկավարների, հանձնաժողովում կլինեն հանրահայտ այլ մարդիկ, բայց հանձնաժողովը չհամաձայնեց դրան և գտավ, որ ավելի ճիշտ կլինի իրենք նախօրոք քննարկեն չափորոշիչը, և եղած առաջարկություններն իրենց կողմից քննարկվելուց հետո կներկայացվի ավագանուն:

Կարեն Կարապետյան - Ո՞ր հանձնաժողովը:

Գագիկ Բաղդասարյան - Ավագանու մշակույթի, կրթության հանձնաժողովը:

Կարեն Կարապետյան - Հանձնաժողովն ի՞նչ արձագանք է տվել:

Գագիկ Բաղդասարյան - Դեռևս չեն արձագանքել, պարզապես մեկ անգամ քննարկում է եղել, ես նույնպես մասնակցել եմ քննարկմանը, որոշեցին հետաձգել հարցի քննարկումը, այսօր երկու տարբերակն էլ իրենց մոտ է:

Գագիկ Սանթրոսյան - Հանձնաժողովն այդ հարցը դրել է քննարկման, մոտ օրերս կլինի վերջնական որոշում և համապատասխան նախագիծը կներկայացվի:

Կարեն Կարապետյան - Շատ լավ: Ինչ եմ խնդրում: Իհարկե, դժվար է այդպես ձևակերպել, որ հետո մեր մեկնաբանությունները հստակ լինեն, բայց մենք վտանգ ունենք, որ Երևանում վերջը բոլոր շենքերի վրա անպայման ինչ-որ մեկի անունը կհայտնվի, ընդ որում, բոլոր այդ մարդիկ պրակտիկորեն ինչ-որ արժանիքներ ունեն: Նախաձեռնող խումբը, որ դիմում է, հաստատ ինչ-որ բան կա, մաքսիմալ փորձեք հստակ ձևակերպել, որ մեկնաբանության հնարավորությունը մինիմալ լինի:

Պարոն Պողոսյան, Ձեր հաջորդ հարցը.

Հրաչ Պողոսյան - Հաջորդ հարցը վերաբերում է ստորգետնյա անցումներին.

Ստորգետնյա անցումները, մանավանդ կենտրոնական մասում, մեղմ ասած խայտառակ վիճակում են. օրինակ «Ձկան խանութի» մոտ գտնվող ստորգետնյա անցումը կամ, ասենք, Հրապարակի մոտ գտնվող ստորգետնյա անցումը: Այնտեղ ուղղակի մտնել հնարավոր չէ: Դրանք բոլորը դարձել են զուգարաններ, լուսավորություն չկա, կեղտ և ահավոր սանիտարական վիճակ է, սալիկները պոկված են, օրինակ՝ բժշկական ինստիտուտի մոտի անցումով եթե մեկ անգամ գնաք, ոնց որ Հայրենական պատերազմից հետո լինի: Ես կարծում եմ, որ այդ հարցը պետք է լուծվի, որովհետև մենք մարդկանց արգելում ենք վերևով անցնել, իսկ ներքևով էլ հնարավոր չէ անցնել: Այն ստորգետնյա անցումները, որոնք մենք նոր ենք կառուցում, նրանք թույլ չեն տալիս բոլորին օգտվելու, մեր բնակչության մի հոծ զանգված հաշմանդամներ են, երեխաների սայլակներով կանայք են, նրանք չեն կարող օգտվել այդ անցումներից, այսինքն՝ եթե վերգետնյա անցում ենք անում, պետք է մտածենք այն մասին, որ

հաշմանդամ մարդը կարողանա դրանից օգտվել, հակառակ դեպքում, որտեղի՞ց նա անցնի, հայտնի չէ:

Կարեն Կարապետյան - Համաձայն եմ, ինչ վերաբերում է հարցի երկրորդ մասին, ճարտարապետը գիտի և, կարծում եմ, հաշվի կառնի հետագա նախագծերի մեջ:

Ինչ վերաբերում է ստորգետնյա անցումներին, հիմա գույքագրում ենք բոլոր այն պայմանագրերը, որոնք ունենք այգիներում, պուրակներում, ստորգետնյա անցումներում, որտեղ պայմանագիրը ստորագրելու պահին մեր գործընկերն իր վրա վերցրել է բարեկարգման աշխատանքները մաքսիմալ փորձում ենք այդ դաշտը կարգավորել: Ինչ վերաբերում է մնացած դեպքերին, երբ որ այնտեղ որևիցե գործընկեր կամ որևիցե տնտեսվարող սուբյեկտ չկա, մենք օրերս հայտարարել ենք մրցույթ 43 հասարակական զուգարան կառուցելու համար: Վստահ չեմ, որ 43 զուգարան լինելուց հետո ստորգետնյա անցումները կլինեն ավելի բարվոք վիճակում, այստեղ յուրաքանչյուրս խնդիր ունենք: Այս ծառատունկը և շաբաթօրյակները, որ անում ենք, մեր աշխատանքի մեջ է մտնում նաև երևանցիների քաղաքացիական ակտիվ դիրքորոշումը զարգացնելը: Մենք չենք կարող մեկ միլիոն մարդու հսկել: Քաղաքի սանմաքրումը երևի բոլորիս դուր չի գալիս, առավոտյան ժամը 9.00-ին լավ է, երկու ժամ հետո կուտակված աղբ կա, և ամեն մեկի մոտ պահակ չենք կարող դնել, որ ծխախոտը ծխելուց հետո մի՛ գցիր գազոնին, Կոկա-Կոլայի շիշը մի՛ գցիր մեքենայից... Այս քարոզչությունը պետք է անել, հիմա բոլոր ստորգետնյա անցումները գուցե այն պարբերականությամբ չեն մաքրվում, ինչը որ անհրաժեշտ է, բայց գիշերվա մաքրածը հաջորդ օրը կարող է գին չունենալ:

43 հատ զուգարան դնելուց հետո կվերանա՞ դա, թե՞ չէ, չգիտեմ: Այստեղ մենք ռեալ քաղաքացու հետ աշխատելու խնդիր ունենք, որովհետև ամենալավ սանմաքրումն ապահովելով, աղբահանությունն ապահովելով, եթե քաղաքացին ինքն իր մեջ պարտավորություն չի զգում, շատ դժվար կլինի: Օրերս շատ հետաքրքիր հարցում ենք կատարել, թե ինչի՞ց է երևանցին ամենաշատը դժգոհում.

25.0%-ն ասել էր՝ աշխատանքի բացակայությունից, 18.0%-ը՝ աղբահանությունից, բայց երբ վերցնում ենք վիճակագրությունը, Երևան քաղաքում բնակչության 44.0%-ն աղբահանության համար չի վճարում, այսինքն՝ աղբահանությունից դժգոհում է ավելի քիչ մարդ, քան չվճարողների թիվն էր, որովհետև շատ հավանական է, որ 18.0%-ի մեծ մասն այդ պահին աղբահանության համար չվճարող մասը լինի: Հավանական է, ես չգիտեմ, այդ անալիզը դեռ չենք արել: Միակ օրինակը դա է, այդ օրինակը ես, կարծեմ, բերել եմ, չգիտեմ ավագանուն ասել եմ, թե՞ չէ, Տոկիոյում նույն աղբահանության խնդիրը կար, աղբամանները, տեխնիկան շատացնում էին, ներդրումներ էին անում, բայց չէին կարողանում հարցին լուծում տալ, մինչև Տոկիոյի քաղաքացիներին կոչ արվեց, որ դուք պետք է քաղաքը մաքուր պահեք:

Այսօր Տոկիոն ամենամաքուր քաղաքներից մեկն է, մեր մենթալիտետը դա թո՞ւյլ է տալիս, թե՞ ոչ, չգիտեմ, բայց եթե երևանցին իր պահելաձևով չփոխվի, ապա կամայական լուծումը կմեղմացնի, բայց այդ խնդիրը չի լուծվի: Հիմա ինչպե՞ս անենք, դա պետք է համատեղ մտածենք: Կա՞ մեկը, որ ուզում է այս հարցին բան ավելացնի:

Լևոն Իգիթյան - Մինչև մեր հեռուստատեսության քաղաքականությունը չփոխվի, մենք քաղաքակիրթ քաղաքացի չենք ունենա:

Կարեն Կարապետյան - Ոչ միայն հեռուստատեսությունը, այլ նաև մենք՝ յուրաքանչյուրս, պետք է փոխի իր վերաբերմունքը, իր շուրջը ման գա, տեսնի թերությունները և փորձի վերացնել դրանք, իրեն հաշվետվություն տա, որ ինքը դա կատարում է, օրինակ՝ մենք այդ հարցով դիմել ենք քաղաքապետարանի անձնակազմին /1900 հոգի մարդ ենք/.

Արդյոք մեզանից յուրաքանչյուրն իր համատիրությունով զբաղվո՞ւմ է, թե՞ ոչ:

Բոլորը հասկանում են, որ համատիրության կայացման խնդիրն անհրաժեշտ խնդիր է, որպեսզի այդ եռաստիճան կառավարումն էֆեկտիվ լինի, բայց մեր աշխատակիցները բոլորը չեն, որ համատիրությամբ զբաղվում են, կարող է և ավագանին այս հարցին օգնել:

Օրինակ՝ տրանսպորտի ոլորտում ուզում ենք մոնիտորինգ անել և փորձելու ենք այսուհետ մաքսիմալ մեծ զանգված ներգրավել մեր ծրագրի մեջ: Դիմելու ենք Պոլիտեխնիկ ինստիտուտ, ուսումնարաններ, որտեղ տրանսպորտի դեպարտամենտներ կան, որ ուսանողները գան և մոնիտորինգով զբաղվեն: Երբ որ մենք ուսանողներին կոչ անենք՝ չսափրված վարորդին տեսնելուց դիտողություն անեն, տաքսուն, որ կանգառում կանգնում է, 2-րդ շարք կանգնող երթուղայինների վարորդներին դիտողություն անեն: Շատ հետաքրքիր ենք մենք՝ հայերս, անօրինականությունը տեսնում ենք, չենք արձագանքում, բայց երբ որ պետք է լինում, բողոքում ենք: Անպայման, եթե երևանցին իր տեսանկյունը չփոխի, ամենալավ թիմն էլ արդյունքի չի կարող հասնի: Այստեղ մենք այդ քարոզչության, այդ բարոյական միջավայրի, քաղաքացու պատասխանատվության, գուցե կենացի նման է ասվածը հնչում, ֆորմալիզացված չէ, բայց դա չի նշանակում, որ քաղաքապետարանն իր վրայից պատասխանատվությունը զցում է: Ասում են՝ մինչև քաղաքացին քաղաքը մաքուր չպահի, քաղաքը մաքուր չի դառնա, դա ճշմարտություն է: Մենք մեր պատասխանատվությունը և դրա համար հաշվետվությունը պետք է ներկայացնենք հասարակությանը: Պետք է ավելացնենք նաև աղբամանները, տեղեր կան, որտեղ մարդիկ ծխախոտը զցելու տեղ չունեն, այդ խնդիրը կա, դրա համար մենք աղբահանության հետ կապված համապատասխանաբար որոշակի փոփոխություններ ենք անելու: Վերջիվերջո, Երևանում պետք է ունենանք մի վիճակ, որ քաղաքապետարանի կամայական աշխատող անուն, ազգանուն հավաքելով տեսնի՝ ինքը աղբահանության համար վճարե՞լ է, թե՞ ոչ, գույքահարկի համար վճարե՞լ է, թե՞ ոչ, հողի հարկի համար վճարե՞լ է, թե՞ ոչ, համատիրության համար վճարե՞լ է, թե՞ ոչ և այլն: Այդ կարգապահությունը պետք է լինի, այստեղ մենք պատասխանատվություն չենք զգում, բայց ուրիշից պատասխանատվություն ենք պահանջում: Սա պետք է ինչ-որ ձևով ուղղվի:

Գագիկ Գյանջումյան - Ինչ վերաբերում է ստորգետնյա անցումներին, իհարկե, ընդհանուր առմամբ այդպես է, թերություններ կան, բայց պարոն Պողոսյանը երևի Կորյուն խաչմերուկի ստորգետնյա անցումով մեկ տարի առաջ է անցել, հիմա այդ վիճակում չէ, անցած տարվանից սկսած՝ բոլորը հատ-հատ վերանորոգվել է:

Հրաչ Պողոսյան - Ուրախ եմ, եթե վերանորոգվել է, իսկապես այդտեղով վաղուց չեմ անցել:

Մինչև երրորդ հարցին անցնելը, ուզում եմ այս թեման մի փոքր էլ շարունակեմ.

Հանրահավաքների խնդիրը կա, ուրեմն ես ապրում եմ Մատենադարանի մոտակայքում, ամեն անգամ սարսափով սպասում եմ հանրահավաքի ավարտին, որովհետև մեր շքամուտքերը հանրահավաքի մասնակիցների համար դառնում են զուգարաններ:

Երրորդ հարցը, պարոն քաղաքապետ, վերաբերում է Աբովյան և Սայաթ-Նովա փողոցների անկյունում կառուցվող Սուրբ Աննա եկեղեցուն և վեհարանի շենքին: Ուզում եմ հարցը տալ հետևյալ կերպ.

Այդ նախագիծը, որով կառուցվում է և շինթույլտվություն է ստացել համապատասխան կազմակերպությունը, քննարկվել է կաթողիկոսի ճարտարապետական խորհրդում և մերժվել, քննարկվել է քաղաքապետարանի քաղաքաշինական խորհրդում և մերժվել, քննարկվել է մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդում և մերժվել: Այդ բոլոր մերժումներից հետո ստացվել է շինթույլտվություն, և նրանք կառուցում են:

Հիմա հարցը դրա մեջ չի, որ ասենք օրենքի խախտումով է կառուցվում (չնայած դա էլ կարևոր հարց է), հարցը նրանում է, որ այնտեղ գոյություն ունի 13-րդ դարի հուշարձան, որը միակն է Երևանում, որը 1600 թվականի երկրաշարժից հետո մնացել է կանգուն: Մենք ուրիշ ավելի հին հուշարձան ուղղակի չունենք: Այդ հուշարձանի ուղիղ կողքից փոստրակ է փորվել 2-3 մետր խորությամբ, ես երեկ եմ այնտեղ եղել, և այդ փոստրակն առաջինը շատ հավանական է, որ վնասի եկեղեցուն, հուշարձանին, երկրորդը՝ անպայման այնտեղ պետք է, անկախ բոլոր տեսակի որոշումների, արխիտոլոգիական պեղումներ արվեր:

Ինչու, որովհետև այնտեղ տարբեր դարերում եղել են եկեղեցիներ, որոնք քանդվել են, և հիմա մնացել է այդ փոքրը: Ես երեկ այնտեղ դիմեցի շինարարին և հարցրի, թե առանց

պեղումների ինչպե՞ս են անում, նա ասաց, որ մեքենան աշխատում է, ինքը նայում է, և եթե որևէ արժեքավոր բան է լինում, դնում է մի կողմ:

Պեղումներն այդպես չեն անում, պեղումներ անելու համար կա որոշակի մեթոդոլոգիա, որով պետք է արվի պեղումը: Ես կարծում եմ, որ այդ հարցին պետք է անդրադառնալ, և այդ նախագիծը, որն անորակ նախագիծ է, դժբախտաբար, կարծում եմ, որ պետք է վերանայվի, և չի կարելի թույլ տալ, որպեսզի դա կառուցվի:

Կարեն Կարապետյան - Պարոն Մինասյանը երեկ այդ հարցով ինձ հետ խոսել է:

Պարոն Հասարթյան, Դուք կապվել եք, չէ՞, Ճարտարապետների միության հետ, ինդրե՛մ:

Միքայել Հասարթյան - Հարգելի՛ ավագանի, երեկ մենք ստացել ենք ահագանգ Ճարտարապետների միության նախագահից, ժամանակավորապես դադարեցվել են փոստրակի հետ կապված աշխատանքները, չնայած տեղում ներկա էր արխետոլոգը, որը, ինչպես Դուք նշեցիք, այդ տիպի հետազոտություններ է կատարում: Հիմա դադարեցված է, և ինդիքը քննարկման փուլում է, որպեսզի հասկանանք՝ ինչպե՞ս ենք շարունակելու: Ինչ վերաբերում է նախագծին, մշակույթի նախարարության մեթոդական խորհրդի եզրակացությունում նշված է, որ նախագիծը համաձայնեցվում է մինչև զրոյական նիշ, այսինքն՝ վերգետնյա ծավալների հարցը ենթակա է քննարկման և ժամանակի ընթացքում վերանայման:

Կարեն Կարապետյան - Շնորհակալություն, հաջորդ հարցի համար ձայնը տրվում է Իշխան Դարբինյանին:

Իշխան Դարբինյան - Շնորհակալություն, հարցս հետևյալն է.

Նոր Նորքի 7-րդ զանգվածի թիվ 115 մանկապարտեզի շենքը նախատեսվել է վերանորոգել՝ այդ ընթացքում երեխաներին տեղափոխելով 116 մանկապարտեզ:

Խնդրում եմ պատասխանել, թե ի՞նչ ընթացքում են գտնվում վերանորոգման աշխատանքները և ե՞րբ է նախատեսվում մանկապարտեզի վերաբացումը:

Կարեն Կարապետյան - Հարցին կպատասխանի կրթության վարչության նախադպրոցական կրթության բաժնի պետ Սիլվա Աշոյանը:

Սիլվա Աշոյան - Հ.115 մանկապարտեզը փակվել է ոչ թե վերանորոգվելու նպատակով, այլ երեխաների թիվն այնտեղ իջել էր վերջին մեկ տարվա ընթացքում 25-27-ի, իսկ հարևանությամբ գտնվող հ.116 մանկապարտեզը հնարավորություն ուներ նոր խումբ ունենալու, տեղափոխություն է կատարվել, այստեղ, փաստորեն, երկու մանկապարտեզները միացվել են, և տարածքն ազատվել է, փոքրիկ մի տարածք, որն այժմ գտնվում է համայնքի տնօրինության տակ, իսկ այդ մանկապարտեզը՝ 116-ը, 115-ի 25 երեխաներին ընդգրկել է՝ միաժամանակ ընդունելով նաև աշխատանքի մանկապարտեզի դաստիարակներին: Լուծումը կատարվել է օպտիմալացման եղանակով:

Կարեն Կարապետյան - Շնորհակալություն, բավարարված ե՞ք:

Իշխան Դարբինյան - Ո՛չ, իհարկե ո՛չ:

Կապված երեխաների թվաքանակի հետ մենք ունենք այլ տեղեկություններ, նույնիսկ կան բողոքներ, քանի որ մանկապարտեզները դարձել են անվճար, երեխաների մեծ հոսք է առաջացել, մարդիկ ուզում են իրենց երեխաներին տանել մանկապարտեզ, բայց, ցավոք սրտի, մենք դարձրել ենք անվճար, սակայն հնարավորություն չենք տալիս երեխաներին հաճախելու մանկապարտեզ:

Կարեն Կարապետյան - Մեկ խորհուրդ. եթե դժվար չէ, եկեք հարցադրման մեջ մեկս մյուսին հարգենք, դարձրել ենք անվճար, հնարավորություն չենք տալիս, շատ կատեգորիկ է Ձեր պնդումը, եթե դեմ չեք, այդպես չի: Եթե կա մանկապարտեզ, որը չունի զբաղվածություն, մանկապարտեզը պետք է փակվի, տեղափոխվի, եթե լինի պահանջարկ, մանկապարտեզն անպայման կբացվի: Որևիցե մեկն արհեստական պրոբլեմ չի ուզում ստեղծել: Կա ցանկություն մի լավ բան անելու, մեր հասարակության մեջ կամայական լավ բանը անպայման գտնում է ինչ-որ հետաքրքիր արձագանք, չէ՞, իսկ ո՞վ է ասել, որ մենք հայտարարել ենք, թե արգելում ենք տանել: Մենք կնայենք այնտեղի պահանջարկը,

վարչական շրջանի ղեկավարը կամփոփի, եթե իրականում պահանջարկը կա, և մանկապարտեզն անհրաժեշտ է, ապա անպայման հարցին լուծում կտանք: 25 հոգով մանկապարտեզ պահելը տրամաբանական չի, 25 հոգանոց մանկապարտեզ չի լինելու, մենք անսահման հնարավորություններ չունենք և կամայական ծախսեր չենք կարողանում անել, սա է տրամաբանությունը: Համաձայն չե՞ք:

Իշխան Դարբինյան - Պարոն քաղաքապետ, ես, լինելով որպես Երևան քաղաքի ավագանի, նոր եմ իմանում, որ մանկապարտեզի նշանակությունը փոխվել է և դարձել է մեկ այլ հիմնարկ:

Միլվա Աչոյան - Հ.115 մանկապարտեզի օպտիմալացումը տեղի է ունեցել 2010 թվականի հոկտեմբեր ամսին, գործընթացը սկսված է եղել ապրիլից, իսկ անվճար մանկապարտեզների վերաբերյալ որոշումն էղել է այս տարվա ապրիլի 4-ին, և այս ժամանակահատվածում Նոր Նորքի մանկապարտեզ հերթագրված երեխաների թիվն այս պահին, մեզ տրամադրված ինֆորմացիան համալրել են՝ 42 երեխաներ են ողջ տարածքի, ողջ վարչական շրջանի մակարդակով /մասշտաբով/: Այսինքն՝ այն մանկապարտեզը, որի մասին ասվում է՝ հ.116-ը, եթե անգամ լրացուցիչ մեկ խումբ երեխա ունենա, որը շատ ցանկալի է, տարածքը բավարարում է ընդգրկել նաև այդ լրացուցիչ խումբը, իսկ այնտեղ ավելացված երեխաների թիվը 10 հոգի հազիվ լինի կամ 7 հոգի:

Կարեն Կարապետյան - Պարոն Դարբինյան, Դուք բավարարված ե՞ք:

Իշխան Դարբինյան - Ոչ:

Կարեն Կարապետյան - Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է տիկին Մարիամ Ղազարյանին:

Մարիամ Ղազարյան - Իմ փոխարեն հարց կտա պարոն Իգիթյանը:

Լևոն Իգիթյան - Ես հնարավորությունից ուզում եմ օգտվել և մի առաջարկություն եմ անում, և եթե դա հնարավոր է, այսօր այս դահլիճում քվեարկության դնենք, ես դրա իրավաբանական կողմը չգիտեմ: Մեկընդմիջտ մայրաքաղաքում՝ Թատերական հրապարակում, որը, չգիտես ինչու, դարձրեցին Ազատության հրապարակ (պաշտոնական այդպիսի որոշում չկա), արգելել մեկընդմիջտ քաղաքական միջոցառում անցկացնելը, որովհետև եթե մասսայական միջոցառումները պետք է անցկացնել, դրանք միայն մշակութային լինեն, և, ընդհանրապես, քաղաքական հավաքների համար չդիմեն, որովհետև արդեն ամոթ է:

Կարեն Կարապետյան - Իրավաբանները կքննարկեն, ինչքանով է տրամաբանության մեջ, դա մեր գործառույթն է, թե՞ չէ, ավագանու գործառույթն է, թե՞ չէ, և հաջորդ ավագանու նիստին Ձեզ կտեղեկացնենք, եթե այս պահին պատրաստ եք պատասխանելու, խնդրե՛մ:

Զավեն Առաքելյան - Հարգելի՛ ավագանու անդամներ, զանգվածային միջոցառումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ և օրենքով, այսինքն՝ որևէ սահմանափակում ազատ մասնակցելու որևէ հավաքների, այդ թվում քաղաքական, կարող է լինել բացառապես օրենքով: Ունենք մենք այդ գործող օրենքը, նաև Ազգային ժողովում կա նոր հավաքների մասին նախագիծ, որով այդ հարցերը կարգավորվում են: Ինչ վերաբերում է, ընդհանրապես, որևէ հարցի շուրջ ավագանու տեսակետի արտահայտմանը, ապա ավագանին այդ հարցով կարող է դիմել ուղերձով և այլն, բայց տվյալ դեպքում, իմ կարծիքով, քանի որ Սահմանադրությամբ և օրենքով հստակ այդ հարաբերությունները կարգավորված են, կարծում եմ, սա այդ դեպքը չէ:

Կարեն Կարապետյան - Պարոն Իգիթյան, Դուք ավարտեցի՞ք, թե՞ ավելացնելու բան ունեք:

Լևոն Իգիթյան - Այո:

Մեկ բան ավելացնեմ.

Գեղխորհուրդ գոյություն ունի, դեռևս վերջնականապես չի կազմավորվել, բայց վերանայվում է և մեկ անգամ նիստ է եղել, հուշատախտակների հարցը, ինձ թվում է, կարելի վստահել նրանց:

Գարեն Գարապետյան - Հաջորդ հարցի համար ձայնը տրվում է պարոն Գագիկ Գրիգորյանին:

Գագիկ Գրիգորյան - Հարգելի՛ գործընկերներ, հարցը վերաբերում է Շենգավիթի գեղասահքի դպրոցին:

2010 թվականին ապրիլի 12-ին այս հարցը ես հնչեցրեցի և հավաստիացվեց, որ դպրոցը վերակարգավորվելու է, և մինչև 2011 թվականը մենք կունենաք բարեկարգված դպրոց: Ես ուզում եմ իմանալ՝ ի՞նչ աշխատանքներ են տարվել, ի՞նչ փուլում է գտնվում և ե՞րբ կբացվի դպրոցը: Շնորհակալություն:

Գարեն Գարապետյան - Հարցին կպատասխանի սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գևորգ Ենգիբարյանը:

Գևորգ Ենգիբարյան - Հարգելի՛ ավագանի, Գեղասահքի դպրոցի վերաբերյալ Ձեր հարցադրմանը պատասխանեմ, որ աշխատանքները տարվում են, ներկայացված են ծրագրերը, աշխատում ենք, ունենք արհեստական և բնական սառույցի նմուշները, ունենք դրանց սակագները, որոնք համաձայնեցվում են, գործողությունն ընթացքի մեջ է:

Դպրոցի մասին տեղեկացնեմ, որ հաստիքները կառուցվածքով հաստատվեցին այսօր, մնացած աշխատանքները՝ և՛ տեղի հարցը, և՛ արհեստական սառույցի, և՛ բնական սառույցի հարցը քննարկվում է, քանի որ դա կապված է որոշակի ժամանակի հետ:

Գարեն Գարապետյան - Ժամկետ չունե՞նք, թե երբ ենք ավարտում:

Գևորգ Ենգիբարյան - Մենք ներկայացրել ենք մեր ծրագիրը և՛ արհեստական սառույցի, և՛ բնական սառույցի համար:

Գարեն Գարապետյան - Մենք 2010 թվականին հայտարարե՞լ ենք, որ աշխատանքներն ավարտվելու են 2011 թվականին, 2011 թվականի բյուջեում կա՞ դա:

Գևորգ Ենգիբարյան - Ոչ, հայտարարվել է, որ գործընթացի մեջ է:

Գարեն Գարապետյան - Հաջորդ ավագանու նիստում պարոն Գրիգորյանին հստակ ասում եք ժամկետ կամ ասում եք՝ չեք անում, փող չունենք, օրինակի համար եմ ասում, կամ ասում ենք՝ անում ենք, թե չէ քննարկվում է և այլն, ինչ-որ անհասկանալի պատասխան է:

Գագիկ Գրիգորյան - Ես կուզենայի ավելացնել, որ 2010 թվականին՝ ուղիղ մեկ տարի առաջ, վատահեցվեց, որ մինչև 2011 թվականը պատրաստ կլինի: Հիմա անորոշ վիճակ է, ես այդ պատասխանից ոչինչ չհասկացա:

Գարեն Գարապետյան - Ձեզ հաջորդ ավագանու նիստում կպատասխանեն, բայց, կարծում եմ, որ Դուք որպես ավագանու անդամ, 2011 թվականի բյուջեն քննարկելիս, կարող էիք պարզել տարանջատված էր, թե՞ ոչ: Եթե դրան փող հատկացված էր, ապա հստակ 2011 թվականին պետք է անենք, ապա 2011 թվականի բյուջեն հաստատելուց մենք բոլորս պետք է հասկանայինք, որ այդ հարցը կասկածի տակ է: Հիմա խնդրենք մեր գործընկերներին՝ հաջորդ ավագանու նիստում ավելի հստակ կամ գրավոր, ինչու՞ հաջորդ ավագանու նիստում, քննարկումից հետո պատասխանեն:

Գագիկ Գրիգորյան - Ես կուզեի մի բան էլ ավելացնելի:

2010 թվականին 200 մլն դրամ հատկացրեցինք սահադաշտի կառուցման համար, այդ գումարից պետք է հատկացվեր գեղասահքի դպրոցի վերանորոգման համար:

Գարեն Գարապետյան - Խնդրում եմ ավագանուն գրավոր պատասխանել:

Հարցի համար ձայնը տրվում է Պողոս Փլավյանին, խնդրե՛մ:

Պողոս Փլավյան - Շնորհակալություն:

Ճիշտն ասած, նախորդ հարցին էի ուզում անդրադառնալ՝ կապված հ.115 մանկապարտեզի հետ: Ուրեմն, խնդիրը հետևյալում չի, որ երեխաները շատ էին, քիչ էին, խնդիրը դրա մեջ չէ, խնդիրը նրանում է, երբ ներկայացնում էին հարցը, որ շենքը վատթար վիճակում է, և մեր ընկերները նայել էին մանկապարտեզը, իսկապես կար այդպիսի բան, կտուրը վերանորոգված չէր, երկար ժամանակ ջուրը հոսել էր և վնասվել էր, և հավաստիացվեց, որ մանկապարտեզի շենքը կվերանորոգվի և նորից կգործարկվի: Բնականաբար, ոչ ոք քանդված մանկապարտեզ իր երեխային չէր ուղարկի, 25 երեխա էր, բնականաբար 25-ն էլ էր շատ այդ մանկապարտեզին:

Հիմա, ներկա պարագայում, նախ որոշումն ընդունվեց անվճարի, բնականաբար, հոսքի ավելացում կլինի, եթե դրա պոտենցիալը տեղում լինի, դա երկրորդական հարցն է, պարզապես տիկին Աշոյանը, որ պատասխանեց, պիտի շեշտը դնել վերանորոգման վրա, այսինքն, վերանորոգում են և նորից վերագործարկում են, եթե դրա անհրաժեշտությունը լինի: Բնականաբար, պետք է նայել, բայց այստեղ դա հիմնականում վերանորոգմանն էր վերաբերում, դա էր խնդիրը:

Կարեն Կարապետյան - Մենք որոշում ենք կայացրել վերանորոգման:

Ողոս Փլավյան - Որոշումը եղել է նախադպրոցական հիմնարկի կազմավորում, այսինքն, միավորվում են այդ երկու մանկապարտեզները:

Կարեն Կարապետյան - Վանո Վարդանիչ, գրավոր ավագանուն պատասխանեք, նախ ոնիզիա ենք անում, թե ինչպե՞ս ենք որոշել, ի՞նչ է ստորագրվել, ի՞նչ է խոստացվել, և եթե խոստացել ենք և ստորագրել ենք, ի՞նչն է պատճառը, որ չենք անում, իսկ եթե չենք ստորագրել և չենք արել, ո՞րն է պատճառը, որ տարբեր մեկնաբանություններ կան, երկրորդը՝ շտապ հետազոտեք, Երևանի ավագանու անդամներն իրավունք ունե՞ն վարչական շրջանի ղեկավարից տեղեկանալ՝ ինչքա՞ն դիմում կա այդ շրջանում երեխաների ծնողների կողմից: Մենք որևիցե երևանցու մանկապարտեզից արհեստական գրկելու իրավունքը չունենք, ոչ էլ ցանկությունը և, ընդհանրապես, հ.116-ի վերաբերյալ մեր տեսակետը հայտնենք, թե ի՞նչ ենք անելու:

Այլ հարցեր կա՞ն: Եթե չկան, այդ դեպքում բոլորին շնորհակալություն եմ հայտնում, ցանկանում եմ լավ տրամադրություն և խնդրում եմ, կոչ եմ անում՝ վաղը ծառատունկին և շաբաթօրյակին մաքսիմալ ակտիվ մասնակցեք, շնորհակալություն:

Ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ